

Ձեռնարկեալ եմ 'ի ժամուս երկասիրել զշարունակութիւնս  
պատմութեան Հայոց դպրութեան սկսեալ 'ի բ.-բդ դարէ մին-  
չև յաւուրս մեր: Աւարտեալ զգործն և յղկեալ զոճ նորան 'ի  
տիպ արձանացուցից: Լաւ յոյժ առնէիր յերևան հաւաքել Հա-  
յոց գրչագիրս, մանաւանդ պատմականս՝ զոր չեն տպեալ տա-  
կաւին վենետիկեցիք և հետզհետէ հաղորդել ինձ՝ զինչ ինչ գը-  
տանէին առ քեզ: Մշակութեամբ այդպիսեաց յեւրոպացի լե-  
զուս հանդերձ ուսումնական ծանօթութեամբք հնար էր ժամա-  
նակաւ պայծառացուցանել զանուն ազգին: Կատարեան զպաշ-  
տոն քո արդար խղճիւ և զայսու զանցառու մի լինելո:

ողջունելով զքեզ և զքոյոցինս իմովք և իմայնովք՝  
եմ և եղէց  
անփոփոխ առ քեզ սիրով և յարգանօք  
հարազատ քո  
Ս. Նազարեանց.

'ի 10 նոյեմբերի 1845  
'ի Ղազան

հասցէն իմ.

Степану Исаевичу  
Назарянцу.  
Въ Казани.

} Въ старой Горничной,  
Въ домѣ инструментника  
Булъгина.

իսկ քոյդ.

## Մ Ո Ւ Ր

նուէր օր. N. N.

Լազուր երկնքից շաշով, շառաշով  
Մի ասուպ ընկաւ մայր-երկրի կրծքին,  
Մենաւոր ասուպ ոսկեվառ շողքով,  
Եւ պատռեց երկրի կուրծքը խորագին.  
Ընկաւ ու ծածկուեց քարով ու հողով,  
Թաւ մամուռ պատեց նըրա շիրիմին.  
Եւ տարիք անցան համր շարքերով...



Բայց երբ երկնքում իրար դէմուդէմ  
Ամպերն են դիզւում՝ բանակառքանակ,  
Ահեղ ճայթումով խօւլ որոտում են,  
Եւ կրծքերի մէջ կրակ ու կայծակ—  
...Նա լուռ յիշում է, որ տարիք առաջ  
Իրա սրտումն էլ կար տենչ ու կրրակ,  
Որոտ ու զայրոյթ, և սէր ու շառանչ...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

## ԱՐԾԻԻՆ ՈՒ ԱՐՏՈՒՏԸ

Արծիւը կանգնած սև ժայռի գլխին՝  
Հանգիստ ու հպարտ նայում է չորս դին,  
Յաժն ամպեր ճերմակ լողում են ձորում,  
Վերևում վճիտ եթերն է ծորում:  
Եւ ձիւնադադաթ լեռների արջան  
Չորսդին է նայում, ասում ինքն իրան.  
«Ինձնից բարձր էլ ո՞վ կարող է սլանալ,  
Այս վեհ բարձունքին ինձ պէս տէր դառնալ»:

Յանկարծ երկնքի անհուն կապոյտից  
Անոյշ ճռուղիւն հնչեց բերկրալից...  
Արծիւն ահաւոր նայեց դէպի վեր,  
Տեսաւ՝ ոյժը չէ աշխարհին միշտ տէր.  
Արտուտը փաքրիկ մինչ երկինք հասած,  
Արևի ոսկի փայլումն ողողւած,  
Դուքն էր գեղգեղում կենսաբեր դարնան,  
Մահամերձ երկրի օրհներդն յարութեան:

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ